ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Եղե՛ք ուշադիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ✓ ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 1-32-րդ և 46-66-րդ. տվյալ սյունակի՝ Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- ✓ կարճ պատասխանով առաջադրանքներից՝
  - 33-38-րդ և 67-69-րդ. 8-ական վանդակների համապատասխան համարի (համարների) տակ դրե՛ք X նշան (նշաններ),
  - 39-44-րդ. տվյալ վանդակներում գրե՛ք առաջադրանքների պահանջներին համապատասխանող թվերը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կամ բառաձևերում է գրվում տրված տառը:**

1) վա-րկյան, խոխոջ-ունով, վա-ելուչ, հա-ելազարդ –*յ*
2) փրկ-ղակ, արճճազ-ծ, բաց-թյա, փորձան-թ –*օ*
3) սրաշեղ-, տար-ողել, հար-ուխ, խա-ուսիկ –*բ*
4) ար-ար-ել, կուր-ք, ուղեր-, ար-նապակի –*ծ*

2 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկում* ուղղագրական սխալ *չկա:***

1) կխտար, նաֆթավառ, մտացածին, թպրտալ
2) որթատունկ, խափշիկ, հանդիպակաց, խծկել
3) նվագածություն, ժամասացություն, ճմրթել, դժխեմ
4) դշխուհի, հոգածություն, թրթիռ, հինավուրց

3 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) զին(ուժ), հետ(միջօրե), գետ(անցում)
2) կարոտ(ախտ), ձեռք(բերում), ձայն(երիզ)
3) ծայր(ի)ծայր, որոտ(ընդ)ոստ, սարե(սար)
4) առ(հավետ), խաղող(օրհնեք), վերից(վար)

4 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2) ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ԵՐԿՐՆԵՐ
3) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՆԵՐՍԵՍ ԵՐՐՈՐԴ ՏԱՅԵՑԻ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ
4) ՓՈՔՐ ԱՍԻԱ, ԴԱՎԻԹ ԱՆՀՈՂ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված:**

1) աստ(ը)վածավախ, մրմ(ը)նջալ
2) արծ(ը)վային, կտ(ը)րվածք
3) վաթսուն(ը)մեկ, կապ(ը)տուկ
4) հագ(ը)նվել, հանգց(ը)նել

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) զբոսայգի, վեհաշուք, ոսկեգույն, լռակյաց
2) ձկնկիթ, համացանց, ոսկրախտ, ունկնդիր
3) նրբանկատ, արևկող, ինքնուսույց, ճրագալույց
4) վերադարձ, որմնադիր, ընձառյուծ, կոշկակար

7 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) խոնջանալ-հոգնել, ընդարմանալ-ընկրկել
2) ժուժկալ-չափավոր, խուռներամ-բազմագույն
3) ոստան-մայրաքաղաք, ամբարիշտ-ապիկար
4) սևակնել-տխրել, զամբյուղ-կողով

8 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* արմատին (արմատներից ոչ մեկին) *չի կարող* միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-ու*** – կատվաձագ, առապար, բարդի
2) ***-ի*** – այծենակաճ, հոգաբարձու, վայրենաբար
3) ***-անի*** – տեսակավորել, սակավապետ, միգապատ
4) ***-որդ*** – միջնապատ, բաժանարար, բնութագիր

9 **Ո՞ր շարքի *ոչ մի* բառում նշված արմատը *չկա:***

1) տախտակ, անհատակ, գետնատակ – ***տակ***
2) վեհագույն, չքնաղագույն, նորագույն – ***գույն***
3) հպարտություն, հպանցիկ, հպատակ – ***հուպ***
4) պատմուճան, արծաթապատում, հրաշապատում – ***պատում***

10 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *չկա:***

1) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
2) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:
3) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
4) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) գրություն, ձյուն, ավյուն
2) որսաշուն, սյուն, շարժում
3) տուն, գարուն, արյուն
4) անկյուն, մականուն, քավություն

12 **Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ *չկա:***

1) Գեղատեսիլ կիրճում քչքչալով հոսում էր փոքրիկ վտակը:
2) Մազութի մեջ թաթախված թռչունի նման քո խիղճը կնվա, կնվա ու չի կարողանա ճախրել:
3) Ամեն գնով խուսափում էր նրան հանդիպելուց:
4) Քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթյունը վախեցնելու է քուռակին:

13 **Ո՞ր տարբերակում են ընդգծված բոլոր բառերը նախադասության անդամ:**

1) Ամայի փողոցում մեգ-մշուշ, Լռություն է մեռած, Կարոտ է իմ սիրտը <u>քո</u> անուշ Գգվանքին, ի՛մ <u>երազ</u>:
2) Լռել է հեռվում երգը ցնծության Եվ <u>զուցե</u> չկար իմ ծնված ժամից, Գուցե ես <u>ինքս</u> եմ հնարել նրան, Որ սուտ հուշերով մխիթարեմ ինձ:
3) <u>Այսօր</u> եղի՛ր որպես մայր, Բարի, քնքուշ, նրբազգաց, Նստի՛ր խաղաղ մահճիս մոտ, <u>Մութ</u> գիշերին հետս լաց:
4) Օրերի փոշին <u>Դեռ</u> չի աղոտել քո դեմքը գունատ, <u>Բայց</u> ես օտար եմ արդեն այն հուշին, Ուր վեհ էր երազը, ու բախտը՝ ժլատ:

14 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

1) Արշալույսի բոսոր ճառագայթները արտացոլվել էին ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
2) Աննան քաղաքի փողոցներում վախից, անհանգստությունից մոլորվել էր:
3) Ձիերից մի մասի առաջ խոտ էր լցված, մյուս մասի առաջ՝ հարդ, երրորդները նեղվում էին քաղցից, շոգից:
4) Գիքորը ուզում էր քնե՞լ, քնե՞լ, բայց լույսն արդեն բացվել էր, ու սարյակները ճռվողում էին:

15 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) հարթաչափ, զոհասեղան, հանքահոր, քաղաքադուռ
2) հարսնաքույր, լուսանցք, ջրկիր, սպա
3) լուտանք, գնդացիր, կենսագիր, ոստայն
4) դաշտամուկ, լուսնագնաց, գազամուղ, գիսաստղ

16 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) գա, հավատա՛, մուրացող, թվում է
2) զարմանում են, տվել, մոռացել էի, հասա
3) զղջա, կերա, խաղացի, վերացած
4) աղաց, ասա՛, զգա՛, մոտեցած

17 **Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի:**

1) Այն պահին երբ Սիզիփոսին թվում է ինքն ահա կավարտի գործը քարը դուրս է պրծնում ձեռքերից և գլորվում դեպի անդունդը:
2) Մանրուքները որ ցանկացած կնոջ դարձնում են գեղանի կամ տգեղ գրավիչ կամ վանող ամբողջանում են երբ հոգին այդ բոլոր մանրամասներն օժտում է սքանչելի միասնությամբ:
3) Որոշ նրբագեղ կանայք կան որ կանացի բազում հնարքներ օգտագործելով կարողանում են իրենց հմայիչ դարձնել և այդ անելու յուրօրինակ միջոցները միայն իրենց են հայտնի:
4) Բոլոր մեկնաբանությունները սակայն կլինեն հորինովի և անէական իսկ հիասքանչ առեղծվածը գոյատևելով կշարունակի ավելի դյութել տղամարդկանց իր անբացատրելիությամբ:

18 **Ո՞ր նախադասությունն է անենթակա:**

1) Ահա մեծ քաղաքի լքված ծայրամասերից մեկի թաղը:
2) Պտուղը ծառից են ճանաչում:
3) Ցսիրել, չտենչալ, չկանչել…
4) Երկրաշարժից փլատակված քաղաք, անմեղ զոհեր:

19 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Այնպես են գալիս, այնպես են գնում, Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝ Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
2) Որքան էլ գիշերն ահավոր իջնի, Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու, Հարազատ հող ես չեմ գտնելու:
3) Միևնույնն են ինձ հյուսիս թե հարավ, Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում:
4) Այնպես գգվող է երեկոն անափ, Ծաղիկներն այնպես նազով են փակվում:

20 **Ո՞ր տարբերակում միջադաս երկրորդական (ստորադաս) նախադասություն կա:**

1) Վարդանը սարսափում էր, երբ հանկարծ մտածում էր, որ հող հայրենին վտանգված է:
2) Ես ժամանակ շատ ունեմ. որքան անհրաժեշտ եք համարում, այնքան էլ կմնամ:
3) Զգաց, որ փախչելու տեղ չկա, և սեղմվեց մի անկյունում:
4) Կինը, որ ամբողջ ժամանակ մտասույզ իր կարն էր անում, բարձրացրեց գլուխը:

21 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Մինչ նա խոսում էր, ես նայում էի տիկնոջը և սպասում, որ վերջինս այնպիսի պատասխան տա, որ փարատվեն իմ կասկածները:
2) Հենց որ հանեց վերարկուն ու նստեց բազկաթոռին, սկսեց խոսել Փարիզի մասին, բայց շարունակ չտեսնելու էր տալիս իմ զայրույթը, որ գնալով սաստկանում էր:
3) Ինչքան էլ պապս ստիպեց, չասացի, թե ինչ էր եղել այն օրը, երբ մորեղբայրս հեռացել էր տնից՝ երդվելով, որ այլևս չի վերադառնա:
4) Ուր էլ որ լինեմ, անձրևն սկսվելուն պես պիտի մի առանձին հաճույքով կանգնեմ նրա տակ ու թույլ տամ, որ թափվի վրաս, թրջի ինձ հիմնովին:

22 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մեռյալ ծովի ջուրն այնքան աղի է, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ: Արևմտյան Ասիայի տոթակեզ, անանձրև կլիմայի պատճառով ջուրն ուժեղ գոլորշիանում է ծովի մակերևույթից: Բայց միայն մաքուր ջուրն է գոլորշիանում:
2. Մեռյալ ծովի մեծ աղապարունակությամբ է պայմանավորված նրա մեկ այլ առանձնահատկությունն. այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից: Այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:
3. Լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը: Ահա թե ինչու Մեռյալ ծովի ջուրը պարունակում է ոչ թե 23% աղ (ըստ զանգվածի), ինչպես ծովերի ու օվկիանոսների մեծամասնությունը, այլ 30,4% և ավելի:
4. Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից, ուստի մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ձուն է աղի ջրի երեսը դուրս գալիս (իսկ խմելու ջրի մեջ սուզվում է):

1) 4, 1, 3, 2
2) 4, 2, 1, 3
3) 1, 2, 4, 3
4) 1, 3, 2, 4

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Կարկուտն անխնա թափվում էր այգիների վրա, ... ու ճերմակ ուլունքների պես ցրվում գետնի երեսին:

1) որոնցում բերքահավաքը դեռ չէր ավարտվել
2) վնասում արդեն հասունացած մրգերը
3) որոնք տևական անձրևներից արդեն տուժել էին
4) դեռևս ձյան սավանի տակ անհոգ քնած

24 **Տվյալ հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը *չի* գործածվել:**

Երանի՜ նրանց, որ մութ բանտերում
Եվ չարչարանքում՝ դժնի որպես մահ,
Մաշեցին այնքան օրեր հրահրում՝
Գերված թշնամուց՝ անսիրտ ու ագահ:

1) համեմատություն
2) մակդիր
3) անձնավորում
4) շրջադասություն

25 **Բերված հատվածներից որը Մ. Մեծարենցի ո՞ր բանաստեղծությունից է. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. «Արևին»
բ. «Սիրերգ»
գ. «Աքասիաներու շուքին տակ»

1. Ու լույսն անոնց անխոս հուրի՜ դյութական,
   Հրմայագեղ ու վարսքերով արծաթե,
   Շատրըվանին կ'իջնե գուռին մեջ կաթե:
2. Հոգիս թռչնիկ մըն է,
   Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,
   Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի,
   Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա
   Կ'իյնա շնչահեղձ:
3. Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,
   Համբույր՝ լույսեն, որ չորս դիս կը ծաղկի,
   Այս գիշեր Տոն է, հոգվույս՝ Կիրակի՜,
   Համբույրներ կու գան հովեն ու ծովեն:

1) ա-2, բ-1, գ-3
2) ա-3, բ-2, գ-1
3) ա-3, բ-1, գ-2
4) ա-2, բ-3, գ-1

26 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոս Փոքր Միհրը Բաղդադում ո՞ւմ գերեզմանին է այցելում:**

1) Գագիկ թագավորի
2) Բաղդասարի
3) Քեռի Թորոսի
4) Ջենով Հովանի

27 **Տրված հատվածներից ո՞րն է Վ. Տերյանի «Fatum» բանաստեղծությունից:**

1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
   Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին:
2) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝
   Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
3) Այնպես գգվող է երեկոն անափ,
   Ծաղիկներն այնպես նազով են փակվում:
4) Անունդ թող փարոս լինի ինձ
   Սուտ կյանքի և դառը մահու դեմ:

28 **Նշվածներից որը Գ. Զոհրապի ո՞ր նովելի հերոսներից է. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. Հուսեփ աղա	1. «Զաբուղոն»
բ. Հաճի Տյուրիկ	2. «Այրին»
գ. Մարտիրոս	3. «Ճիտին պարտքը»
դ. Վասիլիկ	4. «Փոստա՛լ»

1) ա-1, բ-3, գ-4, դ-2
2) ա-1, բ-4, գ-3, դ-2
3) ա-3, բ-4, գ-2, դ-1
4) ա-3, բ-4, գ-1, դ-2

29 **Ո՞ր տողով է սկսվում Հ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքը:**

1) «Մի խաղաղ առավոտ էր, մի տխուր առավոտ»:
2) «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք»:
3) «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել»:
4) «Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բազազ Արտեմի տանը»:

30 **Տրված հատվածներից ո՞րն է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
   Անուրջում հոգիս կլսե, կզգա
   Ղողանջը զանգի տիեզերական
   Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛րշ տուր
   Օտար, ամայի ճամփեքի վրա.
   Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
   Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
   Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
   Ղողանջն է միայն ձիգ քարավանի
   Հեռավոր, անհայտ ճանապարհների
   Հրապույրներով դյութում իմ հոգին
   Թափառումների տենչով անմեկին:
4) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
   Անծիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:

31 **Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի ո՞ր հերոսները վիպական գործողություններին անմիջականորեն *չեն* մասնակցում:**

1) Սիմոնը և Աղունի մայր Շողերը
2) Աղունի Իշխան հայրը և Արմենակ որդին
3) Սիմոնի քույր Արփիկը և Սերո որդին
4) Աղունի սկեսուր Արուսը և սկեսրայր Աբելը

32 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է հրամայում Հազկերտը Վարդանին նախարարների կեղծ ուրացությունից հետո:**

1) մասնակցել քուշանների դեմ մղվող պատերազմին
2) հազարապետի հետ մեկնել Բյուզանդիա
3) Հայաստանում մեհյաններ կառուցել
4) աջակցել Վասակին արքա ձեռնադրելու գործին

33 **Ո՞ր բառերում սղում *չկա:***

1. նստակյաց, 2. գրչագրել, 3. քմահաճ, 4. չվացուցակ, 5. ճարպկություն,
6. ծանրամարտ, 7. ակնհայտ, 8. հոգեցունց

34 **Ո՞ր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1. վեհանձն-փոքրոգի, 2. մակերեսային-խորունկ, 3. հարթ-ողորկ, 4. առինքնել-թովել,
5. գողանալ-հափշտակել, 6. լայնարձակ-անձուկ, 7. փափուկ-կակուղ,
8. բանուկ-սակավագնաց

35 **Որո՞նք են պարզ նախադասություն:**

1. Թագավորն ընկավ մտածմունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
2. Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անծանոթ իշխանուհուն:
3. Արշակը շփոթված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու, ամեն տեղ հասցնելու մասին:
4. Չանցած մի քանի րոպե՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ձգված կանգնելով բոլորի առջև:
5. Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:
6. Բայց այդ առյուծ տղան իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջիկների դիմաց՝ շիկնած ու ամոթխած:

36 **Ընդգծված բայերից որո՞նք են դրված սահմանական եղանակով:**

Օրերից մի օր փոքրիկը, 1. <u>սեղմած</u> բռունցքն առաջ պարզելով, 2. <u>հարցրեց</u>. «Մայրի՛կ, 3. <u>գուշակի՛ր</u>՝ ինչ 4. <u>եմ պահել</u> բռիս մեջ»: «Թիթեռնիկ»,- փորձեց կռահել մայրիկը: «Օ՜, երբեք 5. <u>չես գուշակի</u>,- խորհրդավոր տոնով ասաց մանչուկը:- Մենք պիտի սպասենք գարնանն ու հետո միայն ցանենք այս սերմը: Եվ 6. <u>կտեսնես</u>, թե ինչ սքանչելի ծաղիկ 7. <u>է աճելու</u>»: Հետո ափը բացեց, և այնտեղ, իսկապես, շագանակագույն սերմի մի փոքրիկ հատիկ 8. <u>կար</u>:

37 **Ո՞ր նախադասություններում բացահայտիչ *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրան մեծ պատիվներով ու շուքով առաջնորդեցին Աշոտ արքայազնի հոր Գագիկի նստավայրը:
2. Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:
3. Այդ օրն աշխատեց որպես լարված մի մեքենա բայց բոլորովին չհոգնեց:
4. Ասորեստանի թագուհի Շամիրամը լսած լինելով Արայի արտառոց գեղեցկության մասին տոչորվում էր նրան տիրանալու անհագ ցանկությամբ:
5. Այդ առեղծվածային դրամները իբրև արծաթյա և ոսկյա բախտավորության խորհրդանիշներ հատուկ կտրվել էին Նոր տարվա տոնի համար:

38 **Տրվածներից որո՞նք կան հետևյալ հատվածում (հատվածը կետադրված չէ):**

Լևոնի ծանր հառաչանքները ողբը հեծկլտանքը կտրատում էին սիրտս: Մայրը Ալմաստը հուսահատությունից իրեն կորցրել էր չգիտեր ինչպես մխիթարի որդուն: Ծանոթ նավաստիները Լևոնին խնդրում էին շարունակել հաճախել պանդոկները և նվագել խոստանալով նրա համար նոր կիթառ գնել: Մի օր վերջապես նա գնաց մի պանդոկ մի նոր կիթառ ձեռքին: Մի չնչին գումար դարձյալ վերականգնեց նրա ավազակների հարձակումից և դրամապանակը գողանալուց հետո փշրված հույսերը:

1. բացահայտիչ
2. տրոհվող հատկացուցիչ
3. բազմակի անդամներ
4. տրոհվող որոշիչ
5. տրոհվող դերբայական դարձված
6. շաղկապի զեղչում

39 **Բառերից քանիսո՞ւմ արմատի հնչյունափոխություն կա:**

ժողովրդական, արարչագործ, մրցութային, ապօրինի, թախծախառն, մնջախաղ, կառուցապատում, փափկել

40 **Բառերից քանի՞սը բարդածանցավոր *չեն:***

ազնվաշուք, չարաղետ, այլադավան, տպաքանակ, դասալիք, մենասահք, արևածաղիկ, բերքատու

41 **Նախադասություններից քանիսո՞ւմ անորոշ դերանուն կա:**

- Թվաց՝ երբևէ այդ հեռու-հեռու Բևեռներն իրար չեն հանդիպելու:
- Վերջացավ կռիվը… ինչքան ժամանակ Քեզնից ոչ մի լուր ու ոչ մի նամակ:
- Ու հանդիպեցինք մենք արևելքում Ինչ-որ հարկի տակ, ինչ-որ համերգում:
- Քայլերս նույն տունն են բերում, Ինչքան ճամփաս շեղում եմ ես:
- Խորհուրդն այնքան խրթին, Եվ խաղն այնքան բարդ է, Որ կարող է հանկարծ Մարդ իր տունը քանդի:
- Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ կապ *չկա:***

- Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասաբի, հացագործ Սիմոնի տները:
- Բարձրախոսների մոտով մի աղջիկ էր անցնում քաղաքային սահուն քայլերով, երեխաների ու ձիու լռիկ ստվերներն օրորվում էին:
- Ալխոն ճանապարհից դուրս եկավ, հնձած արտերում դեսուդեն նետվեց. ազատում չկար. կարմիր բիծը չէր անհետանում:
- Հակառակ ճանապարհով գնացող մի պառավ՝ կապոցը մեջքին, ասաց, որ մի կապույտ ձի է տեսել գյուղ մտնելիս:
- Վրա հասավ գիշերը, և զարմանահրաշ մի երազ տեսավ Էակոսը. տատանվում էին կաղնու ճյուղերը, և մրջյուններն անձրևի նման ցած էին թափվում:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ ուղիղ խնդիր կա:**

- Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը:
- Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված:
- Ամենից բարձր հոխորտում էիր դու, որ ստեղծված իրավիճակի բուն մեղավորն էիր:
- Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն:
- Ամեն օր եկեղեցի էին գնում թե՛ ամուսինը և թե՛ կինը՝ իրենց հետ տանելով նաև մանկահասակ դստերը:

44 **Հատվածներից քանի՞սը միջին հայերենով *չեն:***

- Կը բավեր, որ իր ճարտարության փորձը տար ամենեն անմատչելի կարծված տուները կողոպտելով, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար:
- Յետ այսօրիկ ապստամբեաց ի թագաւորին հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն հայոց թագավորին:
- Զիմ եարն ամանաթ կու տամ, ի վարդին մէջըն պահեցեք, Թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, զտէրն յիշեցեք:
- Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ:
- Ձեզանից հետո ծանրացան նոքա, Ո՛հ, անիծում եմ ես այս օրերը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Գույն*** վերջածանցով կարելի է կազմել որակական բոլոր ածականների գերադրական աստիճանը:
2. Ածականը գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել, հոդ ստանալ և հոգնակի կազմել:
3. Երկու գոյականական արմատով կազմված բարդ բառը կարող է լինել ածական:
4. ***Որդ*** և ***իչ*** ածանցներով կարող են կազմվել և՛ գոյականներ, և՛ ածականներ:
5. ***Ամենա-*** բաղադրիչով սկսվող բոլոր բառերը գերադրական աստիճանով դրված ածականներ են:
6. Ե՛վ որակական, և՛ հարաբերական ածականները ըստ կազմության կարող են լինել պարզ, ածանցավոր, բարդ և բարդածանցավոր:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Պար-կա(1), անամպ լուսաբաց էր: Գիշերային նիրհը թոթափած՝ շո-ենավը(2) շտապում էր դեպի նավահանգիստ: Երկար գինարբու-ից(3) հետո մի ուղևոր դուրս էր եկել տախտակամած: Նա կռանում է, որ ափով ծովից ջուր վերցնի՝ դեմքը զովացնելու, ընկնում է ծովը և քիչ է մնում՝ խե-դվի(4): Նկատելով ջրասույ-ին(5)՝ դելֆինը հասնում է օգնության: Մեծ ճի-ով(6) մարդուն տեղավորում է մեջքին: Վախի՞ց, թե՞ ջրի սա-նությունից(7) մարդն ուշքի է գալիս, կա-չում(8) իր փրկարարից և հանդար-(9) հասնում ափ:

1) 1-զ, 3-կ, 5-զ, 7-ռ
2) 1-զ, 4-ղ, 6-գ, 9-տ
3) 4-ղ, 7-ռ, 8-ր, 9-տ
4) 2-գ, 5-զ, 6-գ, 8-ր

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերը տրված ածանցին միանալիս կհնչյունափոխվեն:**

1) թույն(ոտ), գույն(ավոր), սյուն(ակ)
2) բյուր(ավոր), կույս(ական), հույս(ալի)
3) կույր(անալ), հույն(արեն), բույս(ական)
4) լույս(եղ), գուժ(կան), անկյուն(ային)

48 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:**

1) ՋԼԴ- 934
2) ՈԿԸ-768
3) ՐՆԻԳ -5423
4) ՇՇՁ- 556

49 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) թեզանիք-թևք, քողարկել-թաքցնել, ասպնջական-հյուրընկալ
2) շրջմոլիկ-թափառական, ընչացք-բեղ, խանդաղատանք-գորով
3) անողորմ-ժանտ, բացատ-կածան, արտասվել-հեկեկալ
4) շեղջ-կույտ, լաջվարդ-լազուր, գուղձ-հողակոշտ

50 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Նրա կամքն անսասան էր. չէր հաշտվում պարտության մտքին, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա, իսկ վերջինս մերթ ցատկում էր տեղից հանկարծակի խայթվածի պես, մերթ քարանում:

1) **նրա** – անձնական դերանուն, սեռական հոլով, **չէր հաշտվում** – կրավորական սեռի բայ
2) **հակառակորդի** – գոյական, անորոշ առում, **տեղից** – կապ
3) **խայթվածի** – գոյական, սեռական հոլով, **մերթ** – մակբայ
4) **պես** – կապ, հետադրություն, **իսկ** – համադասական շաղկապ

51 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***մի մազը չպակասել*** – մեկին որևէ չափով վնաս չհասնել, ***գլուխը մտնել***– որևէ բան դժվարությամբ հասկանալ
2) ***աչքի գրող*** –ատելի, անտանելի մարդ, ***ձայն բարբառ հանապատի*** –անարձագանք, առանց ուշադրության մնացած խոսք
3) ***պատին դեմ տալ*** –անելանելի վիճակի մեջ դնել, ***սուրը պատյան դնել*** –կռիվը դադարեցնել
4) ***ձեռքերը լվանալ*** –չխառնվել մի բանի, ***ձեռքերը ծալած նստել*** –անհամբեր սպասել

52 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) պատահար, կերպար, կտցար, տիպար
2) անագ, անդուլ, անմեռուկ, անբասիր
3) խոյակ, վրիպակ, ծորակ, ամրակ
4) դյուրին, նրբին, կարգին, հետին

53 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված բառերն ու դրանց բացատրությունները:**

ա. տատասկ	1. տաք քամի
բ. հյուլե	2. զանազան ծաղիկներից ստացվող բուժիչ հյութ
գ. սկահակ	3. փշոտ տերևներով խոտաբույս
դ. բալասան	4. նվազագույն մասնիկ
ե. խորշակ	

1) ա-2, բ-1, գ-3, ե-4
2) ա-3, բ-4, դ-2, ե-1
3) ա-3, գ-1, դ-2, ե-4
4) ա-2, բ-1, դ-4, ե-3

54 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Մի պահ միայն գրավվելով լուսնկա երեկոյով՝ թագուհին դարձյալ խորասուզվեց մտքերի օվկիանոսում:
2) Մեծ գիտնական դառնալու համար սոսկ տաղանդը քիչ է. հզոր կամք և աշխատասիրություն է հարկավոր:
3) Սպասուհիները հապշտապ սենյակ էին մտնում, փռում էին սփռոցները ու շարում արծաթե սպասքը:
4) Արծրունին ինձ ընդունեց բարեկամաբար, և կարծես առաջին անգամը չէր, որ հանդիպում էինք իրար. այդ հանգամանքը ինձ գրավեց:

55 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայի՝ խոնարհման կանոններից շեղվող ձև կա:**

1) Որքա՜ն մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է մեր դպրոցում:
2) Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը, տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:
3) Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը՝ վառ հագած:
4) Փողոցներն ահա դադար են առնում, Ննջում են խաղաղ խրճիթ ու պալատ:

56 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ ունեցող բառ *չկա:***

1) Եվ հուշերիս զմրուխտյա գետը քո նվիրական դաշտերով տանում է ինձ դեպի երջանիկ մանկությունս:
2) Դու ինքդ ես, ո՛վ մահ, ծերությունն ու ախտերը բոլոր, կախաղան, պատերազմ և հուսահատություն:
3) Մեր կռիվներն ավարտվեցին, և բոլորս ցրվեցինք մեր տները:
4) Երբ պահակները հեռանում էին միջանցքից, բանտարկյալներս մոտենում էինք դռներին և սկսում էինք խոսել միմյանց հետ:

57 **Ո՞ր շարքի ածականներից *ոչ մեկը* համեմատության աստիճաններ *չունի:***

1) մերկ, ամուրի, իմաստուն
2) հավասար, ծալովի, անհեթեթ
3) բուսակեր, ապաշնորհ, կամարակապ
4) որբ, անջատ, երկաթյա

58 **Ո՞ր տարբերակի նախադասության մեջ միայն մեկ սոսկածանցավոր բայ կա:**

1) Կեսգիշերն անցավ. ես տուն չեմ գնում, Երկար, անդադար մայթերն եմ մաշում, Շրջում եմ անվերջ, երբեք չեմ հոգնում:
2) Դանդաղ սահում են օրերը դժկամ, Լույսերս ոսկի ընկան ու հանգան, Ցաված է սիրտս, փայփայեցե՛ք ինձ:
3) Չգիտեմ ինչու ձեր զանգն եմ տալիս, Փախչում եմ, գնում և հեռանալիս Փառաբանում եմ, օրհներգում եմ քեզ:
4) Ու վերջապես դուռը գտնում, Դուրս է թռչում կապը կտրած, Ափին տալով հևում, ճչում:

59 **Ո՞ր բարդ նախադասության մեջ նպատակի պարագա ստորադաս նախադասություն կա:**

1) Հիշում եմ՝ ինչպես ես և իմ ընկեր Անդոն հաց էինք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար:
2) Նա երբեք չէր մտածել, որ կավը, բացի թասերից, գավերից, փարչերից և աղյուսներից, կարելի էր օգտագործել և անմահության համար:
3) Նրա համոզմամբ արձաններ քանդակելու գյուտը բացառապես պատկանում էր իրեն, քանի որ նա չէր տեսել՝ արձանն ինչպես են քանդակում:
4) Ձեռքը երկարեց, որ դուռը բաց անի, բայց հանկարծ սկսեց լաց լինել մանկան նման:

60 **Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ *չկա:***

1) Եզակի հայկական ճարտարապետության անգնահատելի կոթողներից է Գանձասարի վանքի համալիրը, որ գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանում:
2) Գարնանը զորավարն իր զորքով, վերջին Սյունիքի լեռնանցքը հաղթահարելով, դիմեց դեպի Արարատյան դաշտ:
3) Նրա բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը, դեմքը արևառ, ճակատը հանճարեղ մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում նրա ջութակի մոգական հնչյունների հետ:
4) Մի քանի ՀՀ ճանաչված մարզիկներ նախապատրաստվում են օլիմպիական խաղերին:

61 **Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:**

Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի՝ հինգական զույգ որմնասյուներով՝ հաստատված ամուր պատվանդանի վրա:

1) ձևի պարագա
2) որոշիչ
3) պատճառի պարագա
4) հիմունքի պարագա

62 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունն իրագործելու համար ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել:*
   Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել իրագործելու համար իմ մտադրությունը, որ այդ ստեղծագործության բեմականացումն էր:
2) *Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նույն այդ բարիքն արտադրողներին:*
   Համայնապատկան բոլոր բարիքների կողոպտիչները երեսպաշտորեն փշրանքներ են նետում նրանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
3) *Գրող կամ գրականագետ չլինելով հանդերձ՝ Ռոմանոս Մելիքյանը իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:*
   Ռոմանոս Մելիքյանը, որը գրող կամ գրականագետ չէր, իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:
4) *Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողները հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:*
   Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողներն էին, որ հրապարակավ ծաղրում էին նրա ստորաքարշ պահվածքը:

63 **Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա կա:**

1) Երբ ձմեռը ծանր նստում էր մեր երկրում, ծերունիները հաճախ հավաքվում էին վառարանի շուրջը և պատմում հին-հին քաջերից:
2) Գումարտակը հորդ անձրևից լպրծուն դարձած ճանապարհին գայթում էր և դժվարությամբ էր առաջ շարժվում:
3) Մեր զորքերից մի քանի գունդ շուտով պիտի հասցնենք թագավորին՝ ներքին գավառներում ծագած ապստամբությունը ճնշելու համար:
4) Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կատարները՝ մեկը մյուսից խոժոռ ու ահռելի:

64 **Ո՞ր նախադասությունը ճիշտ *չէ* կետադրված:**

1) Թեև քաղաքը մոտ էր, ճանապարհը՝ մեզ ծանոթ, բայցևայնպես ուրիշ աշխարհ թվաց ձորի այդ անկյունը:
2) Իշխանի վրա իրենց հրացայտ աչքերն էին հառել երկու ըմբոստ դեռատիներ, որոնք, շրջապատի լռությունից գրգռված, կարծես կամենում էին սլանալ դեպի իշխանը:
3) Տաք շունչ ես զգում, երբ տեսնում ես, որ բացվել է ձնծաղիկը՝ առաջին սիրո խորհրդանիշը և ժպտում է իր լուրթ աչիկներով:
4) Տղան այդ հանդիպումից հետո անդադար մտածում էր. «Տեսնես ի՞նչ է նրա անունը»:

65 **Ո՞ր բանաստեղծության հեղինակը Հ. Սահյանը *չէ:***

1) «Օրը մթնեց»
2) «Մասրենի»
3) «Անտառում»
4) «Ոսկեհանդերձ եկար»

66 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից բերված հատված *չկա:***

- Արևը արդեն բարձրացել է քիչ,
  Զնգում է օրը, ինչպես երգեհոն-
  Ու կապո՜ւյտ, կապո՜ւյտ, կապո՜ւյտ երկնքից
  Թափվում է կարծես երգ ու խնդություն:
- Եվ մարդիկ՝ անգամ երգերիս անգետ,
  Մարդիկ, որ թեև կյանքիս արձագանք,
  Մնացել են լոկ վկա անտարբեր
  Եվ կարծել են, թե ես վաղուց չկամ,-
  Զարմացած կզգան ինձ այնքա՜ն մոտիկ
  Եվ հանկարծ այնքա՜ն թանկ ու հարազատ:
- Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի -
  Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով:

1) «Տաղ անձնական»
2) «Անվերնագիր»
3) «Մահվան տեսիլ»
4) «Գանգրահեր տղան»

67 **Ո՞ր նախադասություններում դերբայական սխալ ձև կա:**

1. Երկրաշարժից տուժած մարդկանց օգնության ձեռք մեկնեց ողջ աշխարհը:
2. Խանութի բացման օրը բոլոր հյուրերին նվիրեցին խոնավեցնող քսուքներ:
3. Կապտավուն նժույգ հեծած ձիավորը ընթանում էր լարված և ուշադիր:
4. Շատ կարդալուց աչքի լույսը պակասել էր, ու ջահել օրերի նման այլևս մի քանի օրում մի գիրք չէր կարողանում ավարտել:
5. Մթության մեջ խարխափելով՝ փոքրիկներն առաջ էին շարժվում ու հանկարծ իրար կպնելիս սարսափած ճչում էին ու կծկվում:
6. Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մեղմեցին նրա հոգու ցավը:

68 **Ո՞ր նախադասություններում զոյականական անդամի լրացում *չկա:***

1. Խսիրի վրա մեկնված՝ կատուն մռռում է՝ աչքերը կիսախուփ անելով:
2. Արևի տակ շողշողում են թիթեղյա կտուրները, կարծես տները ծածկված են ապակիով:
3. Այդ կամրջին հասնելիս ձին գլուխը կռացնում է, հոտոտում և ապա զգուշությամբ ոտքը փոխում, ինչպես սառույցի վրա:
4. Հույսը հատավ, Ու լաց եղավ, Էնքա՜ն արեց լաց ու կոծ, Որ լիճ կտրեց արտասուքը, Ծածկեց քաղաքն ու ամրոց:
5. Նայում եմ ամպին ու մտածում, թե Անդոն ուղտի մասին երբ է հարցրել ուղտապանից:

69 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Գիտնականները վերականգնել են Թութանհամոնի դեմքը: Փորձին մասնակցել են Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի գիտնականները, որոնք, ուսումնասիրելով փարավոնի գանգի ռենտգենային լուսանկարները, միմյանցից անկախ կազմել են դեմքի պատկերը: Բոլոր խմբերի ստացած արդյունքները գրեթե միանման են եղել, չնայած Ֆրանսիայի և Եգիպտոսի գիտնականները գիտեին, թե որ փարավոնի դիմագծերն են վերականգնում, իսկ ամերիկացիները՝ ոչ: Արդյունքում 3300 տարի առաջ ապրած մարդու երեք դիմանկարներն էլ գրեթե նույնն էին և նման էին Թութանհամոնի մումիայի զմռսված դեմքին: Նույնն էին դեմքի ձևը, չափերը, աչքերի ձևն ու դիրքը. երեք նկարներում տարբեր էին ստացվել միայն քթի և ականջների ծայրերը:

Ամերիկացիները այնուհետև հետազոտեցին նաև մումիան՝ առաջին անգամ օգտագործելով գերբարձր ճշտություն ունեցող ռենտգենյան մի նորագույն սարք, և պարզեցին, որ փարավոնը եղել է նիհարակազմ, ու մահվան պահին՝ մ.թ.ա. 1352 թ., երբ տասնինը տարեկան էր, նրա օրգաններն առողջ էին: Մահվան հավանական պատճառ կարող էր լինել որսի ժամանակ ոտքի՝ մարտակառքից ընկնելիս ստացած կոտրվածքից առաջացած բարդացումը, այլ ոչ թե սպանությունը, ինչպես կարծում էին եգիպտագետները: Նման կարծիքի առիթ դարձել էր 1968 թ. նկարահանման ժամանակ գանգի մեջ հայտնաբերված ոսկորի բեկորը, ինչը, համաձայն ամերիկացիների ուսումնասիրության, ակնհայտորեն առաջացել էր փարավոնի մումիան պատրաստելիս:

Պատմաբաններից շատերը նրա սպանության վարկածը բխեցնում էին նրանից, որ գահակալման ընթացքում Թութանհամոնը երես էր թեքել եգիպտական աստվածներից, դարձել միաստված, ինչը չէին հանդուրժում բազմաստվածության կողմնակիցները:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ նա սպանվել է իր գլխավոր խորհրդականի ձեռքով՝ շահադիտական նպատակներով: Վերջինս հետագայում բարձրացել է գահին և ամուսնացել փարավոնի այրու հետ:

1. Ամերիկացիները դեմքի պատկերը կազմելուց բացի ուսումնասիրել են նաև Թութանհամոնի մումիան և առաջ քաշել վերջինիս մահվան նոր տեսակետ:
2. Ռենտգենյան նկարը հետազոտողներին հնարավորություն է տվել պարզելու մահվան պահին փարավոնի ունեցած տարիքը, ինչը մինչ այդ անհայտ էր պատմությանը:
3. Ըստ տեսակետներից մեկի՝ փարավոնը, երես թեքելով իր ժողովրդի պաշտելի աստվածներից, անցել է միաստվածության, ինչը դրդել է գլխավոր խորհրդականին սպանելու վերջինիս:
4. Գերբարձր զգայնություն ունեցող սարքի միջոցով պարզվել է, որ փարավոնի քթի և ականջների ձևը բոլորից ճշգրիտ վերականգնել են ամերիկացիները:
5. Թեև ոչ բոլոր երկրների գիտնականներին էր հայտնի, թե փարավոններից որի դիմագծերն են վերականգնում, սակայն բոլորի ստացած պատկերները գրեթե նույնն էին:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառավերջի ***ի*** ձայնավորը ***ական*** ածանցից առաջ հնչյունափոխվում է ***յ***-ի:
2. Բառասկզբի ***ու, ի, է(ե)*** ձայնավորները մի քանի բառերում դառնում են ***ը:***
3. ***Յու*** երկհնչյունը կարող է հնչյունափոխվել ***ը***-ի, ***ե***-ի և սղվել:
4. Միևնույն բառի թե՛ արմատը, թե՛ ածանցը կարող են հնչյունափոխված լինել:
5. Բազմավանկ բառերի փակ վանկի ***ի***-ն կարող է սղվել:
6. ***Ու*** ձայնավորը կարող է հնչյունափոխվել թե՛ ձայնավորի, թե՛ բաղաձայնի: